

1.3. Գներ և սակագներ ¹⁰

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 58 աշխատանքները (131001-131031, 132001-132008, 133001-133006, 134001-134005, 135001-135002, 137001-137006 ծածկագրերը) կատարվել են սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Գործող մեթոդաբանության համաձայն, յուրաքանչյուր ամիս հաշվարկվել են հետևյալ գների ինդեքսները.

- ✓ սպառողական գների ինդեքս (ըստ հանրապետության և 11 հետազոտվող բնակավայրերի՝ 65 ապրանքային խմբերով, ծառայությունների տեսակներով և 400 անվանում ապրանք (ծառայություն)-ներկայացուցիչներով,
- ✓ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս (ըստ հանրապետության և հետազոտվող 11 արդյունաբերական ճյուղերի),
- ✓ գյուղատնտեսական արտադրանքի իրացման գների ինդեքս (ըստ հանրապետության, իրացման 3 ուղիների, ապրանքային խմբերի և հետազոտվող 61 անվանում մթերքի),
- ✓ գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս (ըստ հանրապետության, ապրանքային խմբերի և հետազոտվող 92 անվանում արտադրության միջոցների),
- ✓ բեռնառաքումների սակագների ինդեքս (ըստ հանրապետության, տրանսպորտի տարատեսակների (երկաթգիծ, օդային, ավտոմոբիլային և խողովակաշարային)),
- ✓ արտաքին առևտրի գների ինդեքս՝ մշակվել են եռամսյակային կտրվածքով, 3 ուղղություններով՝ ըստ բոլոր երկրների, ԱՊՀ երկրների և այլ երկրների:
- ✓ 87 անվանում կարևորագույն ապրանքատեսակների գների օպերատիվ 10-օրյա դիտարկում (ըստ հանրապետության և հետազոտվող 11 բնակավայրերի, որի հիման վրա կատարվում է սղաճի հաշվարկ հանրապետությունում):

2004թ. սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար աշխատանքներ են տարվել սպառողական գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ: Մասնավորապես, պատրաստվել է մակրո-ծրագիր սեզոնային ապրանքների գների լրահաշվարկման համար:

Սկսած 2004թ. փետրվար ամսից, կազմակերպվել են սպառողական գների դիտարկման աշխատանքներ Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում) և հաշվարկվել են գների ինդեքսներ Արարատի մարզով:

Սպառողական գների ինդեքսի հաշվարկման համար յուրաքանչյուր ամիս դիտարկվել, գրանցվել և մշակվել է շուրջ 140000 գնային տեղեկատվություն:

Հայաստանը ԱՄՀ-ի տվյալների տարածման միջազգային հատուկ ստանդարտին անդամակցության կապակցությամբ մշակված նոր մեթոդաբանության համաձայն ՀՀ-ում սպառողական գների և արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսները հաշվարկվել են նաև յուրաքանչյուր ամսվա համար՝ որպես բազիսային ժամանակաշրջան ընդունելով 2002 թվականը:

¹⁰ Տես՝ Ծրագիր, Հավելված I:

Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման և ներդրման նպատակով վերանայվել և ճշգրտվել է հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ու ուսումնասիրվող արտադրատեսակների ցանկը (կրկնակի ընդլայնվել է հետազոտվող դաշտը), մշակվել է 1-Գ-ին (տարեկան) նոր հաշվետվական ձև և լրացման հրահանգ, տեխնիկական առաջադրանք, ինչի հիման վրա կազմվել են գների ինդեքսների հաշվարկման ծրագրատեխնոլոգիական խնդիրները, համապատասխան միջազգային չափանիշների, կատարվել է մինչև 2000 անվանում արտադրատեսակների կոդավորում՝ համապատասխան տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի (11 նիշով) և այլն:

Արտաքին առևտրի ինդեքսների նախնական մշակումների ընթացքում ներմուծվող (արտահանվող) ապրանքատեսակների զգալի քանակով բացակայության, գնային մեծ տարբերությունների (որոնք առաջ էին բերում գների ինդեքսների կտրուկ տատանումներ) հետ կապված մեթոդաբանական խնդիրները լուծելու նպատակով, կատարվել է ներմուծման (արտահանման) միջին գների ստուգում և դրանց միջոցով սահմանային գործակիցների հաշվարկ, ինչը հնարավորություն է տվել հայտնաբերել ոչ ներկայացուցչական և գնային կտրուկ փոփոխություններով ապրանքատեսակներ:

Հայաստանը շարունակել է իր մասնակցությունը ՀՆԱ-ի և ազգային արտարժույթի գնողունակության համարժեքության հաշվարկման միջազգային համադրումների ծրագրի նոր փուլի (2004թ. տվյալներով) աշխատանքներին: Համաձայն այս ծրագրի, 2004թ. ապրիլի 19-23-ը և նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 3-ը Մոսկվայում հրավիրված աշխատանքային սեմինար-խորհրդակցությունների ընթացքում քննարկվեց և հաստատվեց շուրջ 1500 անվանում սպառողական, 200 ինվեստիցիոն ապրանքների (ծառայությունների), ինչպես նաև շինարարության բաղադրամասերի և ոչ շուկայական ծառայությունների ցանկն ու բովանդակությունը, որոնց գների ամենամսյա դիտարկման և միջին գների հաշվարկման աշխատանքները կատարվում են սկսած 2004թ. հունվարից: Միաժամանակ, նախորդ համադրումների (2000թ. տվյալներով) արդյունքներով մշակվել և պատրաստվել է վերլուծական նյութ, ինչը գետեղվել է տարբեր ժողովածուներում:

Որոշակի աշխատանքներ են տարվել գյուղատնտեսական արտադրանքի, արտաքին առևտրի, շինարարության գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման և ներդրման ուղղությամբ (մասնավորապես վերանայվել և ճշգրտվել են հետազոտվող բազային արդյունաբերական կազմակերպությունների ու ուսումնասիրվող արտադրատեսակների ցանկը, գների ինդեքսների հաշվարկման ծրագրատեխնոլոգիական խնդիրներ և այլն):

Աշխատանքներ են տարվել գյուղատնտեսական արտադրանքի գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանության հետագա կատարելագործման և ներդրման ուղղությամբ: Վերանայվել է գյուղատնտեսության գների հետազոտման դաշտը: 2004թ. ապրիլի 1-ից 6000 գյուղացիական տնտեսությունների փոխարեն կազմակերպվել է գների դիտարկում 7600 գյուղացիական տնտեսություններում: Դրա կապակցությամբ կազմակերպվել է մարզային գործակալությունների աշխատակիցների հրահանգավորում և ուսուցում:

Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերի 200 գյուղական բնակավայրերում ընտրանքային եղանակով ընտրված 7600 գյուղացիական տնտեսություններում կատարվել է գյուղատնտեսական մթերքի իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների, քանակի ու ծավալների ամենամսյա հետազոտություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվարկվել են հանրապետությունում գյուղատնտեսական մթերքի իրացման գների ինդեքսներն իրացման 3 ուղիներով (մթերող կազմակերպություններին, անհատ ձեռնարկատերերին, գյուղատնտեսական մթերքի շուկայում (61 ապրանքատեսակներ)), և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսներ (92 անվանում արտադրության միջոցներ): Միաժամանակ, գյուղատնտեսությամբ զբաղվող թվով 100 առևտրային կազմակերպություններից հավաքագրվել է գյուղմթերքների իրացման ծավալների և գների մասին տեղեկատվություն սկսած 2004թ. հունիսից:

Ազգային հաշիվներում, որպես դեֆլյատորներ օգտագործման նպատակով կատարվել է տնտեսության առանձին ճյուղերի գների ինդեքսների լրացուցիչ հաշվարկ՝ եռամսյակային (նախորդ եռամսյակի, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ) և տարեկան կտրվածքներով: